

փոս մը փորեմ և անիծածները մէջը թաղեմ...
 գէթ պարարտութեան տեղ ծառայեն... Բայց,
 ափսոս, հիվ պիտի դարձնէ ինծի իմ կորստն,
 ցուցած ոսկիներս (չալահառայ և յրեալ՝ ա-
 բոռի մը վրայ խյնալով)։ իմ խեղճ ոսկիներս,

իմ տիրուն փայլուն զաւակներս... իմ կեանքս
 ... իմ ուրախութիւնս...

(Վարազդյորը կ'իջե՛ն)

(Շարայարեղի)

Հ. Ա. ՏԻՐՈՅԵԱՆ

ԱՅԼԵԻՍԹԻԲ

ՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԿՕՄՊՕԶԻՏՈՐՆԵՐ

(20-րդ դար)

Ե Յ Ե Բ Ա Ն

(Շարունակութիւն տես Բազմավէպ, 1926 էջ 154)

Ե. — ԱՐՇԱԿ ԱԴԱՄԵԱՆ

1. Կեանքը

Հայ երաժշտութեան լաւագոյն կոմպոզիտորներից մէկն է Արշակ Ադամանը, որ առանձնապէս ուսումնասիրել է երաժշտութեան փիլիսոփայութիւնը։

Ծնւել է նա Բազում 1884 թականին։ Նրա քոյրերն են Եւրոպայում հռչակ ստացած դաշնակահար Հեղինէ և Եւգինէ Ադամանները։ Մի ամբողջ գեղարուեստաւէր ընտանիք, որը մեծ ուշադրութիւն է դարձնում երեխաների ուսումնական և գեղարուեստական դաստիարակութեան վրայ։ Այդ միջավայրում էլ նրա երաժշտական դաստիարակութեան զործը դրւում է լաւագոյն հիմքերի վրայ։ Նրա ծնողները հրաւիրում են ամենալաւ և ամենայայտնի ուսուցիչներին — ֆրիստափոր Կարա — Մորզա և Ռեթինսկի։ Վեց տարեկան հասակում նա իր ցոյքերի և եղբայրների հետ սովորում է դաշնամուր և ջութակ նւագել։ Նա ուսուցչի տաժ գասը նւագում է միայն լսելով։ Այդպէս շարունակւում է մի ամբողջ ամիս և ուսուցիչը չի հասկանում, որ նա նոթաներ չի ճանաչում։ Դա ցոյց է տալիս, թէ նա ինչքան լաւ լսողութիւն ունի։

Միջնակարգ կրթութիւնն ստանում է նա Բազուի գիմնազիայում, ուր առաջ է տանում նաև իր երաժշտական դաստիարակութիւնը։ Նստած դաշնամուրի առաջ օրը 5-6 ժամ նւագում է իր ամենասիրած երաժշտագէտի՝ Բեթհովէնի ստեղծագործութիւնները և միաժամանակ փորձում է երաժշտական կտորներ հեղինակել։ Նոյն շրջանում էլ նա ուսումնասիրում է Մարքսի պատմական մատերիալիզմը։ Վերջացնելով գիմնազիան՝ Բազուից անցնում է Պետրոգրադ (այժմ Լենինգրադ) և մտնում տեղական համալսարանը, ուր ուսումնասիրում է իրաւաբանութիւն, էգանոմիկա, փիլիսոփայութիւն և երաժշտութեան թէօրիա։ Պետրոգրադում նա ցոյց է տալիս իր երաժշտական տաղանդի ոյժը։ 18 տարեկան հասակում գրում է մի մէլոդիկլամայիւս, և ընկերների խորհրդով ներկայացնում Ռուսաստանի ամենամեծ

հրատարակել էր Իւրգենսոնին (Iurgenson)։ Երկը տպագրուած է և ստանում հօ-
նօրար։ Դա նրա ամենաառաջին տպագրուած երաժշտական ստեղծագործութիւնն է։

Այնուհետև անցնում է նա Բերլին և մտնում «Störte» կոնսերւատօրիան։
Այդ աշխարհում նա աւելի է խորանդամ իր երաժշտական մասնագիտութեան
մէջ։ Սակայն նա Բերլինում երկար չի մնում. այդ տեղից անցնում է Եւրոպայի
առաջնակարգ կոնսերտները, շրջում է զխաւառապէս կօպէն Հակէն, Փարիզ, Հոմ,
ժընն, Շւէցերիա և ստանում երաժշտական բազմերանգ տպաւորութիւններ։

Համաշխարհային պատերազմի նախօրեակին վերադառնում է Բազու և վա-
րում զանազան պաշտօններ, Դանուում է իրաւաբան, ետրիս — կոնսուլտ Իսկ
խորհրդային իշխանութեան շրջանում Բազուի և Աստարիանի համալսարաններում
պատմական մատերիալիզմից կարգում է դասախօսութիւններ, Այնուհետև անցնում
է Թիֆլիս և սովետական հայկական ամենաառաջին միասիայի քարտուղար նշա-
նակում, իր անկեղծ և եռանդուն «գործունէութեամբ զբաւում է նա Թիֆլիսի
խորհրդային իշխանութեան ուշադրութիւնը։ Միասիան որոշ առաքելութեամբ ու-
ղարկում է նրան Կ. Պօլիս։ Նոյն ժամանակաշրջանում էլ նա վարում է երաժշտա-
կան զանազան պաշտօններ։ Այսպէս՝ հրաւիրում է Սարաուդի կոնսերւատօրիան
երաժշտութեան դասատուի պաշտօնով, Դրանից յետոյ անցնում է Թիֆլիս և մօտ
երկու տարի վարում «Հայտրտան» (հայ արեւստի տան) վարչութեան նախագահի
պաշտօնը։ Այդ ժամանակաշրջանում նա զբաղւում է հրապարակ է հանում մի
շարք գեղարեւոտական հրատապ խնդիրներ։ Որո՞նք են այդ կենսական հարցերը։
Ամենաառաջին հերթին ձգտում է նա ձեռք բերել Թիֆլիսի «Կամերային» Թա-
տրոնը։ Ստեղծում է ժուրֆիքսների տրադիցիան։ Այնատում է քննադատութեան
տրադիցիա մտցնել երաժշտների մէջ։ Այնուհետև Հայաստան մօտիկից ծանօթա-
նալով Հայկական երաժշտութեան դրական և բացասական գծերի հետ, ձգտում
է նրա բացասական երևոյթներին հակադրել լաւագոյն տարրերը։ Նա գտնում է,
որ գեղարեւոտ միւս ճիւղերում հայ ժողովուրդն արել է կուլտուրական որոշ
նւաճումներ, որով կարող է պարծնել կուլտուրական ժողովուրդների առաջ։
Երաժշտութեան ֆրոնտում սակայն նա դեռ առաջ չի բերել տրադիցիա, և ոչ էլ
կարողացել է առաջխաղացումներ առնել, այլ բուսականացել է մի այնպիսի պրի-
միտիվով (նախնական, սկզբնական), որը չի կարող համեմատել նրա հոգեկան
ոյժերի և մանաւանդ այժմեան կեանքի քարոզ պահանջների հետ։ Նա գտնում է,
որ հայ ժողովուրդն երաժշտութեան առաքարիզում այն ժամանակ միայն կուլտու-
րական ժողովուրդների շարքում համահաւասար տեղ կարող է զբաւել, երբ նախ՝
իր ժողովուրդական ինքնուրոյն երգին սինթետիկ կերպով կը միացնէ եւրոպական
երաժշտութեան կուլտուրայի ամենավերջին նւաճումները և յետոյ՝ կը սովորի իր
հոգեկան բարդ ապրումները, իր հարազատ երաժշտական լեզուով և եւրոպական
երաժշտութեան ոյժով արտայայտել։ Ահա այն խնդիրները, որ յարուցանում է
Արամիան։

Թիֆլիսում նա մօտ երկու տարի գործում է մասնաւոր երաժշտական խմբա-
կում, իսկ 1923—1924 Թի. Յունիսը Թիֆլիսի պետական—ժողովրդական առաջին
դպրոցում երաժշտութեան Թէօրիայի և սօլֆէջիայի դասեր է տալիս։ Այդ շրջա-
նում առանձնապէս սիրելի է դառնում իր աշակերտներին, որոնք առաւօտ վաղ,
զաւերից առաջ դպրոց են գալիս և լսում նրա երաժշտական զանազան Թէմաների
շուրջ առած բացատրութիւնները։ Այդպիսով նա աշակերտների մէջ բուռն հե-
տաքրքրութիւն է աւել է զարթոնում դէպի երաժշտութիւնը։ Նոյն ուսումնական
շրջանում նա դպրոցի ուսուցիչների համար կարգում է մի շարք դասախօսու-

Թիւներ, զլիաւորապէս երաժշտութեան փիլիսոփայութեան մասին. միաժամանակ թիֆլիսի «ԶՐԵԼԻԵՋԱ» Թերթում գրում է երաժշտական քննադատութիւններ: Այդպիսի եռանդուն և անձնէր զործունէութեամբ նա ժողովրդականութիւն է ձեռք բերում և «Կոյրութեան աստղադիմորքան» երաժշտական բաժնում փոխ նախագահ է ընտրւում:

1924 թիւ վերջին Հ. Ս. Խ. Հ. Լուսժողկոմատի կողմից Երեանի Կօնսերւատորիայի վերատեսուչ է նշանակւում: Այդ պաշտօնը վարում է նա մինչև օրս:



Երեանի գիտական կոնսերւատորիայի սիմֆոնիկ օրկէստրը
(Nº. 1. Արշակ Ազամեան, 2. Զուբակեան 3. Վիլհելմ Լյուդուիգ, 4. Ս. Մ. Միլերեան)

Իրրե կազմակերպիչ՝ նա տաղանդաւոր է: Նրա շնորհիւ այսօր Երեանի Կօնսերւատորիան անում է մեծ և բարդ զեղարեւոտական նաւումներ: Իրրե փաստ արձանագրենք սիմֆոնիկ երաժշտութեան յաղթանակը: Նրա նախաձեռնութեամբ է, որ Երեանում սկիզբ առեց սիմֆոնիկ օրկէստրը, որով Հայաստանի ժողովրդական մասսաներն այսօր հնարաւորութիւն են ունենում ծանօթանալու Արեւմտեքի երաժշտութեան բարձր ներշնչումների հետ:

II. Արշակ Աղամեանի առանձնայատկութիւնները

Արշակ Աղամեանը բազմակողմանի զեղարեւոտական և գիտական պատրաստութիւն ունի և օժտւած է մի շարք առանձնայատկութիւններով:

Իրրե վերլուծող՝ նա յատկապէս է և բազմիչ քննադատի մտածող: Ինչո՞ւն է կայանում այդ ուղղութիւնը: Ի՞նչ մտածողութեան այն եղանակն է, որ եղբա-

կացութեան միջոցով՝ հեղինակն ընդհանուր դրութիւններէր յանգում է մասնաւորի։ Աղամեան ընդհանուր դրութիւնները բազմաթիւ փորձերից և առանձին օրինակներէր Վերաբայականացրած ճշմարտութիւններով և լօզիկայով մասնաւորեցնում է։ Դա նրա լուսագոյն գծերից մէկն է։

Աղամեան արժէքաւոր է նաև իբրև մանկավարժ—ուսուցիչ։ Նա աշակերտներին ստիպում է, որ ունենան գիտական—արածշտական լայն և բազմակողմանի զարգացում, տան տրամաբանական պատասխան, լուրջ կերպով վերաբերին դէպք իրենց մասնագիտական առարկաները և լաւ հասկանան այն, ինչ սովորում են։

Իբրև դասախօս նա գեղեցիկ է արտայայտւում։ Ունի էօրիցիա, բազմակողմանի զարգացում, արամտութիւն և արամաբանական խորը մտածողութիւն։ Առհասարակ նրա դասախօսութիւնները արամաբանօրէն շատ բարձր են և բարդ։ Գուցէ այդ է պատճառը, որ նրանք հասկանալի են միայն պատրաստած խաւերի համար։ Այդ դասախօսութիւնները միշտ բերում են նորութիւն, թարմութիւն և զարմացնում ունկնդիրներին իրենց արամտութեամբ։ Առանձնապէս հետաքրքիր են նրա երաժշտութեան մէջ ստատիկայի և դինամիկի դասախօսութիւնները։ Դրանք երաժշտական առաջնակարգ թէմաներ են, որոնցով զբաղեցնում է Աղամեան և հայ երաժշտական աշխարհը։

Ինչո՞ւն է կայանում այդ սուղութիւնների էութիւնը։

Ժողովուրդների ստեղծագործութեան առաջին շրջանն է ստատիկան, որ իշխում էր դեռ դասական երաժշտութիւնից առաջ։ Ստատիկայի հակադիր պատկերն է դինամիկականը, որի ամենապառ նմուշն իր զարգացման մասով սօնատի՝ և ֆուզայի՝ ձևն է, կամ նոյն մտքով զրաժ մեր ժամանակակից երաժշտական նոր ձևերը։

Աղամեան զբաղւում է նաև էմօցիոնալիստների և զվուկիստների ստեղծագործութիւններով։

Ի՞նչ են ասում այդ կոմպօզիտօրները։

Էմօցիոնալիստները երաժշտութեան մէջ դնում են խորը զգացմունք և տրամադրութեան յուզ։ Այդ ուղղութեան ամենատիպիկ ներկայացուցիչներն են Բիթհոլդէն և Վագները, իսկ զվուկիստներն այն երաժշտագէտներն են՝ որոնք առաջնորդում են ծայրի գեղեցկութեամբ և հարմոնիայով։ Այդ շօլայի ամենատաղանդաւոր արտայայտիչներն են Մօցարտ և C. Debussi։

Վերջին ժամանակներս Աղամեան հետաքրքրւում է նաև «Պատմական մատերիալիզմն ու երաժշտութիւնը» և «Երաժշտութեան բայերը» առաջնակարգ խնդիրներով։ Մինչև օրս կարծում էին, որ գեղարուեստական այլ ճիւղերի հակառակ, երաժշտութիւնը չունի իր մէջ ստիլիզացիա, Դա երաժշտական այժմէական մի հարց է, որով զբաղւել են եւրոպական էսթէտ գիտնականներից շատերը և պարզաբանել նրա էութիւնը։ Մեզանում Աղամեան ամենաառաջինն երաժշտն է, որ պարզեց, թէ երաժշտութիւնը կենսեցի ստիլիզացիան է։

Այս բոլորից յետոյ՝ բնորոշենք Աղամեանի մի այլ գիծը։ Դա նրա ղեկավարի առանձնապատկութիւնն է։ Իբրև սիմֆոնիկ օրկէստրի ղեկավար նա անպայման տաղանդաւոր է։ Երևանում նա մեծ յաջողութեամբ ղեկավարեց 1926 թ.

1. Սօնատ (խոսք)։ Նշագծութեան համար նշանակած երաժշտական կտոր, որ սովորաբար երեք մասից է կազմած։

2. Ֆուզա (խոսք)։ Բազմաձայն երաժշտական կտոր, որի զլխուրդ նիւթը երգում է մի ծայրով, ապա միւս ծայրէք իբար ետեից կրկնում են նոյն եղանակը։

Մարտ 20-ի ամենաառաջին սիմֆոնիկ օրկեստրը, որ իր բնոյթով կարելի է պատմական օր անւանել, Այդ օրը նա ցոյց տվեց ուժեղ տէմպերամէնտ, գեղեցիկ ճաշակ, նուրբ շարժում և խորը մտեցում:

III. Աղամեան իրերն ստեղծագործով

Մեր երաժշտական աղբատիկ աշխարհում Աղամեան լաւագոյն ստեղծագործողներից մէկն է: Իբրև ստեղծագործող ունի նա բազմաբանգ երաժշտական կտորներ, որոնցից առանձնապէս արժանի են ուշադրութեան մի շարք ֆորտէպիանօյի սօնատա, սկէրցօ (հանաք, կատակ), արևելեան ոսնդօ, չարգահ և այլն: Այդ բոլոր ստեղծագործութիւնները գրուած են բացառապէս դաշնամուրի համար: Դրանց մէջ անպայման առաջնակարգ տեղ է զբաղում «Երկրորդ սօնատը», որանց դուք զգում էք մասսաների բուռն և փոթորկոտ պայքարը:

Սօնատի երկու թէմաներն աւելի զարգացած մասերն են, քան թէ թէմաներ: Նրա ամենաուժեղ մասը՝ միջին զարգացման մասն է, որ կարելի է ասել Աղա մեանի ողջ ստեղծագործութիւնների մէջ ամենարէլիֆն ու ամենատիպիկականն է: Այդտեղ զինամիզմը, տէմպերամէնտը հասնում է վերին աստիճանի բարձր ոգևորութեան: Դա բնորոշ է միայն այն երաժշտագէտի համար, որ ապրել է յեղափոխութեան ժամանակ և յեղափոխական կեանքով:

«Երկրորդ սօնատից» յետոյ՝ Աղամեանի ստեղծագործութիւնների մէջ առաջնակարգ տեղ է զբաղում «Scherzo» (սկերցօ), որ գրւած է սօնատայի ձևով: Ամբողջ երաժշտութիւնն իր կրակոտ, ուժեղ ու հնչիւն խաղերով խոր տպաւորութիւն է թողնում ձեռ վրայ:

Յիշատակենք վերջապէս նրա ամենազլխաւոր գործը՝ «Չարգահ», դա արևելքի և արևմուտքի երաժշտութեան սինթէսն է, որ հիւսւած է արևելեան յայտնի չարգահ թէմայի շուրջ և գրւած է սիմֆոնիկ պօէմայի ձևով: Այնտեղ դուք ունենալու եք արևելեան իսկական թառը, լսում էք ամենաքնքշուղ և թափանցիկ տրամադրութիւններից սկսած մինչև ամենաուժեղ, պայքարող և փոթորկալի յոյզերը:

IV. Այժմ խտացնենք մեր մտքերը

Աղամեանն օժտւած է բազմակողմանի գծերով 1) նա յայտնի է իբրև երաժիշտ մանկավարժ, 2) նշանաւոր է իբրև դասախօս և դեկավար, 3) արժէքաւոր է իբրև ստեղծագործող: Առհասարակ նա գրում է գերազանցօրէն բարդ ձևերով և ժողովրդական-արևելեան բնոյթով: Նրա ստեղծագործութիւններն իրենց ընդհանուր բնորոշ գծերով ցոլացնում են ճոխ ֆանտազիա, ուժեղ զինամիզմ, կրակոտ տէմպէրամէնտ, բարդութիւն, դաշնամուրի ոճի հմտութիւն և խորը հոգեբանութիւն:

Այդ ստեղծագործութիւնները լսելիս դուք զգում էք, որ արեւստագէտը ուրիշմիկայի տեսակէտից իսկական հայ է: Այդ բոլորով հանդերձ սակայն նրա գործունէութեան ամենազլխաւոր և ամենահիմնական առանցքը կազմում է արևելքի սինթէսը:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

